



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԿՈԴ

050.0061 Ա. 26.04.16

26 ապրիլի 2016 թվականի թիվ 61 Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

2016 թ. ապրիլի 28
Երևան

Արթուր Զավադյան

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը
«ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան
հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ¹

Արտաքին աշխարհից եկող ոչ բարենպաստ տնտեսական զարգացումների պայմաններում, տարվա արդյունքում տնտեսական աճը կազմել է 3.0 տոկոս, ինչը 1.1 տոկոսային կետով ցածր է տարվա համար ծրագրված և 0.5 տոկոսային կետով՝ նախորդ տարվա ընթացքում արձանագրված ցուցանիշներից: 2015 թվականի ՀՀ տնտեսական զարգացումները, ընդհանուր առմամբ, պայմանավորված էին վերջին հինգ տարիների ընթացքում՝ տեղական և օտարերկրյա զուտ ներդրումների կրճատմամբ², որին ավելացավ նաև դեռևս 2014 թվականի վերջից սկսված և 2015 թվականի ընթացքում շարունակվող՝ ՌԴ-ից դրամական փոխանցումների նվազման հետևանքով տնային տնտեսությունների տնօրինվող եկամուտների զգալի կրճատումը, ինչպես նաև ընդհանուր գործարար ակտիվության ցածր մակարդակը: Նման միջավայրում դիտվել է մասնավոր սպառման ու մասնավոր ներդրումների (համապատասխանաբար 7.9 և 8.9 տոկոս) նվազում, որի պայմաններում 2015 թվականի տնտեսական աճին հիմնականում նպաստել է զուտ արտահանումը: Վերջինիս աճի արդյունքում էապես բարելավվել է երկրի արտաքին հաշվեկշռվածությունը և ընթացիկ հաշվի պակասուրդը նվազել է՝ կազմելով ՀՆԱ 2.6 տոկոսը: Միևնույն ժամանակ, տնտեսությունում արձանագրված մասնավոր սպառման կրճատումն էականորեն մեղմվել է տարվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության իրականացման, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային պայմանների թուլացման և տնտեսությունում առկա ցածր գնաճային միջավայրի շնորհիվ:

2015 թվականի տնտեսական աճը հիմնականում ձևավորվել է գյուղատնտեսության և արդյունաբերության հաշվին, որոնց նպաստումները աճին կազմել են համապատասխանաբար՝ 2.1 և 1.0 տոկոսային կետ:

Հարկաբյուջետային քաղաքականությունը տարվա ընթացքում բյուջեի պակասուրդի բարձր մակարդակ է ապահովել, որը նպաստել է տնտեսության վերականգնմանը՝ միևնույն ժամանակ չխաթարելով մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունությունը: Արդյունքում, 2015 թվականի ընթացքում ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա զգալի ընդլայնող է եղել, որի պարագայում գնահատված հարկաբյուջետային ընդհանուր

¹ Սույն փաստաթղթում բերված թվային տվյալները վերցված են ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագծից, որը ՀՀ կառավարության կողմից ս/թ մարտի 21-ին հավանության է արժանացել:

² 2011-2015 թվականների ընթացքում մասնավոր ներդրումների տարեկան միջին նվազումը կազմել է 3.2 տոկոս, իսկ օտարերկրյա զուտ ներդրումների նվազումը՝ 15.8 տոկոս:

ազդակի ցուցանիշը կազմել է 2.7 ընդլայնող: Ընդլայնող ազդեցությունը դրսևորվել է եկամուտների 0.7 և ծախսերի 2,0 ընդլայնող ազդակների ձևավորման շնորհիվ: Այս իրավիճակում, ՀՀ պետական բյուջեի պակասուրդը գերազանցել է ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով տարվա համար նախատեսված մակարդակը (2.3 տոկոսի) և կազմել ՀՆԱ-ի 4.8 տոկոսը՝ նախորդ տարվա 1.9 տոկոսի դիմաց: Բնականաբար, պակասուրդի նման աճը անդրադարձել է ՀՀ պետական պարտքի վրա, որը ՀՆԱ կանխատեսվածից ցածր մակարդակի ձևավորման պայմաններում հանգեցրել է պարտք/ՀՆԱ ցուցանիշի 5 տոկոսային կետով աճի և կազմել 48.7 տոկոս: Այդուհանդերձ, կարծում ենք, ՀՀ պետական պարտքը գտնվում է կառավարելի սահմանում և չի խաթարում պարտքի կայունության ապահովման պայմանը:

Անդրադառնալով գնաճին, նշենք, որ 2015 թվականին հիմնականում ձևավորվել էր ցածր գնաճային միջավայր: Այսպես, 2014թ. վերջին ԿԲ կողմից իրականացված կտրուկ գործողությունների ազդեցությամբ 2015թ. առաջին եռամսյակում բարձր գնաճային սպասումներն արդեն խարսխվել էին, ինչով պայմանավորված՝ ՀՀ ֆինանսական և ապրանքային շուկաներում ստեղծված լարվածությունը հիմնականում չեզոքացել էր: Ելնելով դրանից՝ ԿԲ-ն 2015թ-ի առաջին եռամսյակում զգալիորեն թուլացրել է դրամավարկային պայմանները. տարեսկզբից աստիճանաբար իջեցվել է լոմբարդային ռեպո տոկոսադրույքը՝ 8 տոկոսային կետով և վերականգնվել է վերաֆինանսավորման տոկոսադրույքից լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքի բնականոն՝ 1.5 տոկոսային կետով հեռացվածությունը: Բացի այդ, 2015թ. առաջին եռամսյակում ԿԲ կողմից իրականացվել են մի շարք մակրոպրոդենցիալ խթանող միջոցառումներ: Իրականացրած նման քաղաքականության արդյունքում 2015 թ. 12-ամսյա գնաճը աստիճանաբար նվազել է և տատանվել հիմնականում թույլատրելի միջակայքի շրջանակում: Միայն տարեվերջին, գյուղատնտեսության ճյուղի արտադրանքի պահպանվող մեծ առաջարկով, ինչպես նաև ներքին գներում արտաքին գների նվազման մասնակի արտացոլման արդյունքում գնաճը իջել է միջակայքի ստորին սահմանագծից ներքև և կազմել -0.1%: Այս իրավիճակում ԿԲ-ն նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում զգալիորեն թուլացրել է դրամավարկային պայմանները՝ նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1.5 տոկոսային կետով՝ դեկտեմբերի վերջին սահմանելով 8.75 տոկոս: Դեռ ավելին, 2016 թվականի առաջին եռամսյակում ԿԲ-ն շարունակել է նվազեցնել տոկոսադրույքը լրացուցիչ 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 8.25 տոկոս:

2015թ. ընթացքում ԿԲ կողմից իրականացված ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունն անդրադարձել է ֆինանսական շուկայի տոկոսադրույքների վարքագծի վրա՝ նվազման ուղղությամբ, ինչն էլ իր հերթին արտացոլվել է տոկոսադրույքների վերաբերյալ ֆինանսական համակարգի սպասումներում:

Վերը նկարագրված մակրոտնտեսական միջավայրում՝ պայմանավորված հիմնականում ներմուծման ծավալների նվազմամբ, տնտեսական աճի ցածր մակարդակի ձևավորմամբ, հարկման բազայի կառուցվածքային փոփոխությամբ (ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորված է եղել հարկման ոչ ենթակա գյուղատնտեսության ճյուղի աճով), 2015 թվականի ընթացքում պետական բյուջեի եկամտային մասի կատարումն ընթացել է դժվարություններով:

Ընդհանուր առմամբ, տարվա արդյունքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները և դրամաշնորհները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են 2 տոկոսով: Ընդ որում, հարկային եկամուտները և պետական տուրքերը նախորդ տարվա համեմատ աճել են 0.4 տոկոսով, որից հարկային եկամուտների գծով արձանագրվել է 1 տոկոս աճ, իսկ պետական տուրքերը նվազել են 17.5 տոկոսով: Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը ձևավորվել է եկամտային հարկի, մաքսատուրքի, նպատակային սոցիալական վճարների, շահութահարկի գծով մուտքերի աճի արդյունքում, իսկ ավելացված արժեքի հարկի, պետական տուրքի, բնապահպանական ու բնօգտագործման վճարների, շրջանառության հարկի, այլ հարկային եկամուտների, հաստատագրված վճարների և ակցիզային հարկի գծով մուտքերը նվազել են:

2015 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների հարաբերակցության ցուցանիշը կազմել է 21.2 տոկոս, որը ցածր է եղել ինչպես տարվա համար նախատեսված ցուցանիշից, այնպես էլ նախորդ տարվա համար արձանագրվածից:

2015 թվականի ՀՀ պետական ծախսերի կատարման արդյունքում արձանագրվել է ծախսերի ծրագրված մակարդակի կատարման վերջին տարիների ամենաբարձր ցուցանիշը՝ 99.6 տոկոս, որն ուղեկցվել է ծախսերի անվանական մեծության 14.1 տոկոս աճով: Ծախսերի նման աճը ՀՆԱ-ի անվանական մեծության 4.2 տոկոս աճի պայմաններում հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության զգալի աճին՝ կազմելով 27.9 տոկոս՝ 2014 թվականի 25.5 տոկոսի դիմաց: 2015 թվականին ընթացիկ ծախսերի գծով արձանագրվել է 12.5 տոկոս աճ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի աճը կազմել է 26.0 տոկոս: Ընդ որում, պետական ծախսերի նման աճը հիմնականում պայմանավորված է սոցիալական նպաստների և կենսաթոշակների, աշխատանքի վարձատրության և ծառայությունների ու ապրանքների ձեռքբերման ծախսերի աճերով: Ինչ վերաբերում է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին, ապա վերը նշված մեծ աճը պայմանավորված է հիմնականում արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի բարձր կատարողականով, նույնիսկ որոշ ծրագրերի գծով արտաքին ֆինանսավորումը գերազանցել է տարվա համար նախատեսված ցուցանիշը, քանի որ իրականացվել են նաև աշխատանքներ, որոնք չէին ավարտվել 2014 թվականին:

Այսպիսով, 2015 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտների՝ տնտեսական զարգացումներին համահունչ հավաքագրման և ծախսերի բարձր կատարողականի պայմաններում պետական բյուջեի պակասուրդը կազմել է 241.3 մլրդ դրամ՝ 44.9 տոկոսով գերազանցելով տարեկան ճշտված ծրագիրը: 2015 թվականին բյուջեի պակասուրդի անվանական մեծությունն աճել է 2.7 անգամ, իսկ պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 4.8 տոկոս՝ 2014 թվականի 1.9 տոկոսի դիմաց:

Հարկ է նշել, որ տարվա ընթացքում պետական արտարժույթային պարտատոմսերի թողարկման և միջազգային շուկայում տեղաբաշխելու արդյունքում, ՀՀ կառավարության կողմից ճշգրտվել է գանձապետական պարտատոմսերի հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորման տարեկան ծրագիրը՝ սահմանվելով 3.0 մլրդ դրամ՝ տարվա ծրագրով նախատեսված 40.0 մլրդ դրամի փոխարեն: Սակայն, ելնելով ծախսերի՝ նախորդ տարիների միջին կատարողականից ավելի իրականացման հետևանքով աճող պակասուրդը ֆինանսավորելու անհրաժեշտությունից, տարվա արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ցուցանիշը նշված աղբյուրի գծով գերազանցել է նախատեսվածը՝ կազմելով 15.6 մլրդ դրամ: Բացի այդ, ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ծրագրված մակարդակի գերազանցման վրա անդրադարձել է նաև արտաքին վարկերի գծով տարվա համար նախատեսվածից ավելի ստացված միջոցները: Արդյունքում, զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը. 2015 թվականին ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել է պակասուրդի համապատասխանաբար 4.7 և 95.3 տոկոսը, այն դեպքում, երբ 2014 թվականին այդ ցուցանիշները կազմում էին համապատասխանաբար՝ 77.5 և 22.5 տոկոս: Ընդ որում, 2015 թվականին ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 13.99 տոկոս՝ 2014 թվականի 13.48 տոկոսի դիմաց, պարտքի ժամկետայնությունը՝ 2065 օր (2014թ.՝ 2003 օր), մարման բեռի բաշխվածությունը մինչև 2032 թվականն է:

Այսպիսով, մակրոտնտեսական կայունության ապահովման և պարտքի արդյունավետ կառավարման քաղաքականության շարունակականության պահպանմանն ուղղված 2015 թվականի հարկաբյուջետային քաղաքականության ծրագրերի, և դրանք դրամավարկային քաղաքականության հետ կոորդինացված իրականացման շարունակականության ապահովման պայմաններում հնարավոր կլինի նախապայմաններ ստեղծել տնտեսական աճի կայունացման համար՝ նպաստելով միջին ժամկետում երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: